ՄԱՀԱԶԴ

Դուժում ենք հերոսական մահը Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնի մարտիկներ թոկ. թոկ.

ԿԱՄՕ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ
ՍԱՐՏԻԿ (ՌՈՒԲԵՆ) ԱԻԱՆԷՍԵԱՆԻ
ՆԵՐՍԷՍ (ՆԵՐՍՕ) ԶԱՔԱՐԵԱՆԻ
ՎԱՉԷ (ՎԱՉՕ) ՌՈՍՏՈՄԵԱՆԻ
ԳԱԳԻԿ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ
ՎԱՐԴԱՆ ԲԱԽՇԵԱՆԻ

որոնք ընկան վստահ գնդակից պատնէշի վրայ՝ հայրենի հողն ու սեփական ժողովրդի կեանքը, կայքն ու պատիւը պաշտպանելիս:

Կամոն, Շահումեանի շրջանի վերջերս ապստամբուած էրմեղ գիւղի դաշնակցական խմբի խմբապետն էր, որ ընդունեց նահատակութեան սու

Դեկտեմբերի 11ին. Շահումեանի անցեալ շաբաթուայ ընթացքում ապստամբուած Թաղան եւ Սարիսու գիւղերի պաշտպանութեան կատաղի մարտերում:

Մարտիկն ու Ներսէսը, հերոսական մահով, Դեկտեմբերի 15ին, գնացին միանալու դաշնակցական նահատակների մեծ փաղանգին. Ջաւնիլու գիւղի ապստամբական մարտերի ընթացքին: Մարտիկը 25 տարեկան էր (ծն. 1966ին՝ Մարտունու Թարամեանդ գիւղում), իսկ Ներսէսը՝ 18 (ծն. 1973ին՝ Ստեփանակերտում):

Սարատովեցիական կարեւոր նշանակութիւն ունեցող Հասանաբադ գիւղի պաշտպանութեան մասնակցում, Դեկտեմբերի 17ին, հերոսական մահով ընկան Վաչէն, Գագիկն ու Վարդանը: Վաչէն ու Գագիկը երկուսն էլ Էջմիածնից էին, առաջինը՝ 30 տարեկան (ծն. 1961 թ.), իսկ երկրորդը՝ 20 (ծն. 1971ին):

Հոկտեմբերեանում, 1963 թ. ծնուած Վարդան Բախշեանը (26 տարեկան), որ զինուոր ու ուսում թողած մնացել էր ազատամարտիկների խմբին՝ հայրենի հողի ու սեփական ժողովրդի կեանքի ու պատուի պաշտպանութիւնը վեր դասելով ամէն բանից, միաժամանակ մաս էր կազմում Հայ Մարտնչողական Ընդհանուր Միութեան (Հ.Մ.Ը.Մ.) Կենտրոնական Վարչութեան, որի անդամն էր ընտրուել 1991ի ամառանը, Հ.Մ.Ը.Մ.ի Գասուգամարտական Ընդհանուր ժողովի կողմից:

Նրանց յաւիտեան արիամբ կը ջլդեղուին հայրենիքի պաշտպանութեան դիրքերում գտնուող ներկայ ու ապագայ բոլոր սերունդները. նրանց նահատակութեամբ կը դարբնուի Հայաստանի յաւերժութեան դրաւականը եւ անկասկած նրանց օրինակը կը դառնայ վարակիչ, որպէսզի ամուր հիմքերի վրայ վեր բարձրանայ Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանը:

Յարգանք Նրանց անմոռաց յիշատակին:

ՎԱՀԷ ՌՈՍՏՈՄԵԱՆ

ԳԱԳԻԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ



ՎԱՐԴԱՆ ԲԱԽՇԵԱՆ

ԱՊՐԵԼՈՒ ԻՄԱՍՏՆ ՈՒ ՄԵՌՆԵԼՈՒ ԻՄԱՍՏԸ

Աւուրներն ժամը 10-11ի կողմը Հասանաբադ գիւղը պաշտպանող 13 հոգիանոց ջոկատի դէմ անապասելիօրէն դուրս էին եկել դէպի գիւղ շարժուող ՕՄՕՆը, գօրքը ընդհանուր թուով 150-200 մարդուց կազմուած, ինչպէս եւ զրահամեքենաները. Բռնկուած ընդհարման ողջ ընթացքում մարտը վերեւից կարգաւորել էր զինուորական ուղղաթիռը. Տղաները, որ ձորի մէջ էին գտնուել, աջ կողմից մօտեցած կուսակցներին նոյնպէս ընդունելով թշնամու տեղ եւ ձորը ամբողջապէս շրջապատուած համարելով մի պահ նոյնիսկ ցանկացել էին մի քանի նոնակ պայթեցնելով վերջ տալ իրենց կեանքին, սակայն ազդանշանից հասկացել էին, որ մարտերը 30 մարտիկներ 3ից 4 ժամ կարողանք են օգնութեան հասել. տուեալ դիմադրութիւն էին ցոյց տուել զինուորական պատրաստութիւն անցած եւ տեխնիկայով ապահովուած հակառակորդին. Ինքնապաշտպանների գործողութիւնները կաշկանդել էր բաց տեղանքը եւ ձորում գտնուելու փաստը. թշնամու առաջխաղացումը յաջողուել էր կասեցնել, վճռելով սակայն դրա դիմաց 3 թանկագին կեանքով. Արցախի պաշտպանութեան համար նահատակուած Հայ Յեղափոխական Դաշնակցութեան զինուորագրեալներ Մարատ Սանասարեանի եւ Նէլսոն Զաքարեանի զոհ տաք շիրիմների շարքը աւելացաւ եւս 3ով Վարդան Բախշեան, Գագիկ Գրիգորեան, Վահէ Ռոստոմեան. Կսկիծն իր բուռը հաւաքեց մեր հոգիները, եւ անիմաստ ու անհեթեթ են թուում մխիթարանքի պաճուճաւորուած խօսքերը. Գարգապէս կայ բարձրագոյն գաղափարի գիտակցումը, որ վեր է ամեն ինչից. Անցած Յունուարին Բերդաձորում զոհուած ընկերոջ Ստեփանի մահախօսականում Վարդան Բախշեանը գրել է. «Նա ժառանգել էր մեր նախորդ ֆիդայիների վէպ ու պատմաձաձ յատկանիշները եւ օրինակներ էր տալիս իր փորձով ու գործով. Իր մղած կռիւներում հերոսական արարքների մասին երբէք չէր խօսում. Իսկ որքա՞ն էր զայրանում ֆիդայու սուրբ անունը շահարկող-արատաւորողների վրայ. — Կեանքում էլ պարզ էր, շիտակ ու կենսուրախ». Աւուրձն այնքան նման է իրեն, որ կարծես Վարդանը այն ժամանակ նաեւ իր ու իր զոհուած ընկերների մահախօսականն է գրել. Ամեն զոհուողի հետ ակամայ մտածում եմ, թէ գնացին ամենալաւերը, եւ երեւի այդպէս էլ կայ. Հայրենասիրութեան ոչ թէ գիտակցութիւն, այլ թերեւս տաղանդ է պէտք պոկուելու համար համատարած բարոյալքման, շարշիական առուծախի մթնոլորտից ու գնալ ճակատ... չունենալով թիկունք. Ազգի սերունդը կազմող տղերքը, նշանակում է, օժտուած են կամքի, մտքի, հոգու այն հզօր ուժով, որ պոկում է նրանց առօրէական ճահճից, երեկուայ կողքիդ կանգնած քո ընկերներին քեզ ուսուցիչ ու իդէալ դարձնելով. Ամենդժուարը ամենակարեւոր բաների մասին խօսելն է, եւ նորից դիմենք, սիրելի Վարդան, քո օգնութեանը. «Նրանց պանթեոնում աւելացաւ թարմ մի շիրմաթումբ, իսկ անմահների փաղանգում կանգնեց նոր ֆիդայի, նոր զինուոր»